119.- 1672.— Այս է տապան **ՇԱՀԻՆԻ** որդի **ԱԲՐԱՀԱՄԻՆ** որ հանգեաւ ի Քս. թվին. ՌՃԻԱ (1672) Ամ. ողորմի ասացէք։

120.- 1672. — Այս է տապան հանգստեան **ՄՇՏԵՍԻ ԱԾԱՏՈՒՐԻ** եղբաւր ինգցել **ՋՈՂՑԻ ՄԱՐԳԱՐԻՆ** որ հանգեաւ ի Քս. թվին ՌՃԻԱ (1672) Ամ. ողորմի ասացէք։

121.- 1675.— Այս է տապան հանգստեան **ԱԿՆՑԻ ՄԻՔԱՅԷԼԻՆ** որ զԱԿՆԱՑ եկեղեցին նորոգեաց. Ամ. ողորմի ասացէք. թվին ՌՃԻԴ (1675)։

Որքան ուրախ պիտի ըլայի եթէ բանասէրներ հաճէին աւելի տեղեկութիւններ տալ այս հոգեսէր Ակնցիի մասին։ Եկեղեցաշէն Միքայէլ Հալէպէն ձեռնարկեց իր ծննդավայրի եկեղեցւոյն նորոգութեան և ո՞ր եկեղեցւոյն, թէ Ակնայ մէջ եղած տարիներուն նորոգեց և ապա Հալէպ եկաւ պանդխտելու. Երուսաղէմի ուխտաւոր մը չէ՞ր արդեօք։

122.- 1676.— Այս է տապան **ՋՈՂԵՑԻ** . . . (*բառ մը չի կարդացուիր*) **ՄԻՆԱՍԻ** որդի **ՆԱՋԱՐԻՆ** որ դարիպ մնաց ի **ՀԱԼԱՊ**. թվին ՌՃԻԵ (1676)։

123.- 1676.— Այս է տապան **ՓԻՐԱԻԱՇՏԵՑԻ? ՄԱԹԷՈՍԻ** որդի **ՕՍԿԱՆԻ**. թվին ՌՃԻԵ (1676)։

124.- 1677.— Այս է տապան **ԹԱԼԱՍՑԻ ԽՈՒՊԱՍԱՐԵՆՑ ՈՎԱՆԻՍԻ** որդի **ՓԻԼԻԿ?** ին որ հանգեաւ ի Քս. թվին ՌՃԻԶ (1677)։

125.- 1677.— Այս է տապան **ԹՐԽԸՆՑԻ ՍԱՀԱԿԻ** որդի **ԱԻԱԳԻՆ**. թվին ՌՃԻԶ (1677)։

126.- 1678.— Այս է տապան հանգստեան **ԱՋԱՏԻ** որդի **ՍԻՄՈՆԻՆ** որ հանգեաւ ի Քս. թվին ՌՃԻԷ (1678)։

127.- 1678. — Այս է հանգստեան **ՂԱՓԱՆՑԻ ՄԿՐՏՉԻ** որդի **ԳՐԻԳՈՐԻՆ** որ է ի գեղջին ... **ՎԱՆՔ**. թվ. ՌՃԻԷ (1678)։

128.- 1679.— Այս է տապան թարգի պ(ա)շու (**ՕՀԱ՞Ն, ԱԲՐԱՀԱ՞Մ**) որդի **ՄԱՐՏՈՒԻՆ** որ եւ հանգեաւ ի Քս. թվին ՌՃԻԸ (1679)։

129.- 1681.— Այս է տապան **ԱՐՋՐՈՒՄՑԻ** *Խձ(այ)* **ԱՅՎԱՋԻ** որդոյն տիրացու երգեցողաց? դասի որ էր ԺԸ ամաց եւ հանգեաւ ի Քս. թվին ՌՃԼ (1681) ին. դեկտեմբեր ամսոյ . . . ին. Ամ. ողորմի ասացէք ամէն։

Տապանաքարիս արձանագրէն յայտնի կ՚երեւայ որ 1680 ական թուականներուն Հալէպի հայ եկեղեցեաց մէջ կային կանոնաւոր դպրաց դասեր, թերեւս շատ աւելի կանոնաւոր քան այժմու երգեցողաց խումբերը, և այդ՝ շնորհիւ անկէ կէս դար յառաջ Խաչատուր երաժիշտ Արքեպիսկ.ի կազմակերպութեան։

130.- 1683.— Այս է տապան **ՏԷՐ ԱԾԱՏՈՒՐ** գրագիր **ՔՀԱՆԱՅԻՆ** որ հանգեաւ ի Քս. թվին. ՌՃԼԲ (1683). Ամ. ողորմի ասացէք։

Ուրֆացի Տէր Աստուածատուր Քհյ. ծնած է մօտաւորապէս 1600ական թուականներուն. նշանաւոր է իբր գրիչ. աշակերտած է Տէր Վասիլ քարտուղար Արքեպիսկ.ին և հասցուցած բազմաթիւ աշակերտներ (Տես ՔԱԶՄԱՎԷՊ 1933 թիւ 7—8)։

131.- 1683.— Այս է տապան **ՏԷՐ ՍԱՐԳԻՍ** գրագիր **ՔՀՆԱՅԻՆ** որ հանգեաւ (ի) Քս. թվին ՌՃԼԲ (1683). Ամ. ողորմի ասացէք։

Այս Տէր Սարգիս Քհյ. հաւանաբար է Տէր Ներսէս Վրդ.ի եղբայրը, ՔԱՐԱԽԵՆՑ կոչուած, որ 1655ին կը նորոգէ այժմ